ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1953 Общественные науки

Ս. Ալիխանյան

ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻՆ ԿԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան՝ տապալելով բուրժուազիայի ու կալվածատերերի իշխանությունը, վերջ տվեց ազգային ճնշման բոլոր ձևերին։

Լենինի և Ստալինի գլխավորությամբ աշխարհում ամենադեմոկրատական Սովետական պետության ստեղծումը ապահովեց Ռուսաստանում ազգային հարցի արմատական լուծումը, սոցիալիստական ազգերի կազմավորումը։

«Պրոլետարիատը սովետական հասարակարգի մեջ գտավ,— *ասում է ընկեր Ստալինը,*— ազգային հարցի ճիշտ լուծման բանալին, նա այդ հասարակարգի մեջ հայտնագործեց ազգային իրավահավասարության ու կամավորության հիմունքներով կայուն բազմազգ պետություն կազմակերպելու ուղին»[1]։

1917 թվականի հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8-ին) Սովետների համառուսաստանյան 2-րդ համագումարը՝ Լենինի առաջարկությամբ, ստեղծեց Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատ, որը բոլշևիկների պարտիայի և Սովետական պետության լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության ծնունդն էր։ Ազգժողկոմատը պետական ապարատի այնպիսի մի նոր օրգան էր, որի նմանը չէր եղել և չէր կարող լինել բուրժուական կարգերում։ Բուրժուական պետական ապարատի, մասնավորապես իմպերիալիստական պետությունների գաղութային մինիստրությունների ամբողջ գործունեությունը ուղղված է եղել և ուղղված է գաղութային ճնշված ժողովուրդների հակաիմպերիալիստական և ազգային ազատագրական շարժումների դեմ։

Սովետական իշխանությունը առաջին անգամ ստեղծեց պետական ապարատում այնպիսի մի օրգան, որի խնդիրն էր անշեղորեն իրագործել լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը Ռուսաստանի բոլոր ազգերի և ժողովուրդների նկատմամբ։

Ընկեր Ստալինի նշանակումը Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարի պոստում՝ բոլշևիկյան պարտիայի և նրա առաջնորդ մեծ Լենինի հոգատարության արտահայտությունն էր մեր Հայրենիքի բազմամիլիոն ժողովուրդների նկատմամբ։ Այդ նշանակումը միաժամանակ վկայում է այն մեծ և բացառիկ դերի մասին, որ պետք է կատարեր և իրոք կատարեց Ազգությունների գործերի Ժողովրդական Կոմիսարիատը՝ Սովետական բազմազգ պետության ստեղծման, ամրապնդման և զարգացման գործում։

Ռուսաստանի ճնշված ժողովուրդների լիակատար ազատագրման հարցերին վերաբերող դեկրետների, որոշումների, դիմումների, դեկլարացիաների և այլ

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 3, էջ 208։

պատմական վավերագրերի ստեղծումով է բնութագրվում Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի գործունեության առաջին, կարճատև, բայց իր հետևանքներով մարդկության պատմության մեջ նոր դարաշրջան բացող շրջանը։ Ազգժողկոմատի գործունեության երկրորդ շրջանի խնդիրը՝ Սովետական բազմազգ սոցիալիստական պետության ստեղծումն էր, բոլորովին նոր, մեր Հայրենիքի բոլոր ազգերի ու ժողովուրդների քաղաքական ու տնտեսական հավասարության, կամավորության և լիակատար ազատության ու համագործակցության սկզբունքների հիման վրա։

Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը ընկեր Ստալինի իմաստուն ղեկավարությամբ պատվով կատարեց իր պատմական միսիան և Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմավորման կապակցությամբ լիկվիդացվեց 1924 թվականին։

Ռուսաստանի բազմազգ ժողովուրդներին Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի դրոշի ներքո համախմբելու նպատակով, Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատին կից ստեղծվեցին ազգային կոմիսարիատներ և բաժիններ, որոնց ընկեր Ստալինը համարում էր Ռուսաստանի ազգային ծայրամասերի ռևոլյուցիոն շարժման բջիջներ։

Բոլշևիկյան պարտիան և Սովետական իշխանությունը ազգային կոմիսարիատների և բաժինների առջև դրել էին հետևյալ խնդիրները.

«1. Տվյալ ազգության կարիքների մասին ինֆորմացիա տալ Սովետական իշխանությանը։

2. Սովետական իշխանության բոլոր միջոցառումների մասին ինֆորմացիա տալ ազգություններին։

3. Սովետական իշխանության օրգանների միջոցով բավարարել տվյալ ազգության բնակչության մասսաների կուլտուր-լուսավորական կարիքները։

4. Սովետական իշխանության գաղափարները ամենալայն կերպով մասսայականացնել և պրոպագանդել տվյալ ազգության մասսաների մեջ։

5. Հարթել Սովետական իշխանության օրգանների և ազգությունների միջև ծագող ամեն տեսակի կոնֆլիկտները։

6. Սովետական Կոնստիտուցիայի սկզբունքներով մշակել վարչա-տերիտորիալ ազգային ավտոնոմիաների հիմունքները և կանոնադրությունները այնտեղ, որտեղ այդ պահանջվում է առանձնահատուկ տնտեսական և տերիտորիալ պայմաններով»։[1]

Սովետական Ռուսաստանի այն նահանգներում, օկրուգներում և քաղաքներում, որտեղ ապրում էին ազգային փոքրամասնություններ՝ տեղական սովետներին կից Լենինի և Ստալինի առաջարկությամբ ստեղծվում էին ազգային կոմիսարիատների և բաժինների տեղական օրգանները։

Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը տեղական այդ օրգանների առջև դրել էր հետևյալ խնդիրները։

«ա) Սովետական իշխանության սկզբունքների անցկացումը համապատասխան ազգերի մեջ, նրանց մայրենի լեզվով։

բ) Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի բոլոր որոշումների կենսագործումը։

գ) Բոլոր միջոցների կիրառումը՝ տվյալ տերիտորիայում բնակվող աշխա-

[1] Народный Комиссариат по делам Национальностей, 1918.

տավոր մասսաների կուլտուրական մակարդակը և դասակարգային ինքնագիտակցությունը բարձրացնելու համար։

դ) Պայքար կոնտրռևոլյուցիայի դեմ՝ նրա ազգային դրսևորումներով (պայքար «Ազգային» բուրժուական կառավարությունների դեմ և այլն)[1]։

Ազգային Կոմիսարիատները և բաժինները իրենց տեղական բաժանմունքների հետ միասին դարձան Ռուսաստանի նախկինում ճնշված ժողովուրդների մեջ Սովետական իշխանության գաղափարները անցկացնող պետական կարևորագույն օրգաններ։

Իրենց ծագման շրջանում ազգային կոմիսարիատների և բաժինների ֆունկցիաները այնքան լայն ու բազմակողմանի էին, որ համարյա ընդգրկում էին յուրաքանչյուր ազգի կյանքին վերաբերող բոլոր հարցերը։

Ազգային կոմիսարիատները և բաժինները հանդիսանում էին կազմակերպական այն բջիջները, որոնցում ընկեր Ստալինի ամենօրյա հոգատարության տակ աճում և կոփվում էին ապագա ազգային ռեսպուբլիկաների և մարզերի պետական և պարտիական ապարատի կադրերը։

* *

1917 թվականի դեկտեմբերին, ընկեր Ստալինի նախաձեռնությամբ, Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատին կից ստեղծվեց նաև Հայկական Գործերի Կոմիսարիատ։

Ժողկոմսովետի որոշմամբ Հայկական Գործերի Կոմիսար էր նշանակվել սովետական պետական գործիչ Վառլամ Ավանեսովը, իսկ Կոմիսարի տեղակալ՝ բոլշևիկ բանաստեղծ Վահան Տերյանը։

Հայկական Գործերի Կոմիսարիատը ելնելով Ազգժողկոմատի կառուցվածքից և ազգային կոմիսարիատների ընդհանուր խնդիրներից, մշակեց իր ստրուկտուրան և կոնկրետ խնդիրները։

Ըստ այդ ստրուկտուրայի՝ Հայկական Գործերի Կոմիսարիատի գլուխ էին կանգնած կոմիսարը, որը միաժամանակ հանդիսանում էր Ազգժողկոմատի կոլեգիայի անդամ և նրա տեղակալը։ Կոմիսարիատի կոլեգիան բաղկացած էր 5 հոգուց՝ կոլեգիայի նախագահ՝ Հայկական Գործերի Կոմիսար, կոլեգիայի քարտուղար՝ կոմիսարի տեղակալ և կոլեգիայի երեք անդամներ, որոնք կոմիսարիատի խոշոր բաժնի վարիչներ էին։

Հայկական Գործերի Կոմիսարիատը իր կազմակերպման առաջին շրջանում ուներ հետևյալ յոթ բաժինները՝ հրատարակչական, կապի և ինֆորմացիայի, ագիտացիայի, կուլտուր-լուսավորական, ռազմական, գաղթականական և սոցիալական օգնության ու վիճակագրական։

Կոմիսարիատի բաժինները ունեին լայն ֆունկցիաներ և օժտված էին մեծ իրավունքներով։

Կոմիսարիատի բաժինները իրենց աշխատանքը պետք է ծավալեին ոչ միայն Սովետական Ռուսաստանում բնակվող հարյուր հազարավոր հայերի մեջ, այլև Հայաստանում և Անդրկովկասի հայության մեջ։

Հայկական Գործերի Կոմիսարիատի հիշյալ 7 բաժինները պահպանվեցին ամբողջ 1918 թվականի ընթացքում։ 1919 թվականին նրանց մեջ որոշ փոփոխություն կատարվեց, ինչպես կառուցվածքի, այնպես էլ խնդիրների տեսակետ-

[1] „Жизнь национальностей", № 6 от 15 декабря 1918 г.

ռից, փոփոխություններ, որոնք պայմանավորված էին Անդրկովկասից կտրված լինելով, ինչպես և քաղաքացիական պատերազմներով։

Եթե 1918 թվականի ընթացքում ազգային կոմիսարիատների կյանքում խոշոր տեղ էր գրավում Սովետական իշխանության գաղափարների, դեկրետների, որոշումների տարածումը նախկինում ճնշված ժողովուրդների մեջ, ընդ որում բեղմնավոր ու փութաջան աշխատանք էին կատարում ազգային կոմիսարիատների ագիտացիոն, հրատարակչական, կուլտուր-լուսավորական բաժինները, ապա 1919 թվականից սկսած այդ բաժինների շարունակ ուժեղացող աշխատանքին զուգընթաց կոմիսարիատների գործունեության մեջ առաջին դծում կանգնում էր հատկապես ռազմական բաժինների աշխատանքը։ Մնացած բաժինները իրենց խնդիրները ենթարկեցին սոցիալիստական Հայրենիքի պաշտպանությանը։ 1919 թվականին Հայկական Գործերի Կոմիսարիատի ագիտացիայի բաժինը միացավ ռազմական բաժնին և կոչվեց ռազմա-ագիտացիոն բաժին։

1920 թվականի մայիսին ինչպես Ազգությունների Գործերի ժողովրդական Կոմիսարիատի և նրա մյուս ազգային կոմիսարիատների, այնպես էլ Հայկական Գործերի Կոմիսարիատի ստրուկտուրայում կատարվեց արմատական փոփոխություն, որը բխում էր պարտիայի և Սովետական կառավարության կողմից այն ժամանակ Ազգժողկոմատի առաջ դրված կոնկրետ խնդիրներից։

Ազգժողկոմատին կից ստեղծվեց ազգային փոքրամասնությունների բաժին, որի կազմի մեջ մտավ նաև Հայկական Կոմիսարիատը, որպես այդ բաժնի ենթաբաժիններից մեկը։

Սպիտակ գեներալների ռազմական գործողությունների և Անդրկովկասի ու Հայաստանի կոնտրռևոլուցիոն «կառավարությունների» վարած հակասովետական քաղաքականության հետևանքով Հայկական Գործերի Կոմիսարիատի անմիջական աշխատանքն Անդրկովկասի և Հայաստանի հայ աշխատավորության մեջ դժվարացավ, այդ պատճառով Կոմիսարիատը հարկադրված եղավ իր հիմնական գործունեությունը տեղափոխել Սովետական Ռուսաստանի տերիտորիան։

Ռուսաստանում ապաստան գտած հարյուր հազարավոր հայ աշխատավորության մեջ Սովետական իշխանության գաղափարները, լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը լայնորեն պրոպագանդելու, հայ աշխատավորության դասակարգային ինքնագիտակցությունը բարձրացնելու և նրան Սովետական իշխանության շուրջը համախմբելու նպատակով, Հայկական Գործերի Կոմիսարիատը 1918 թվականի սկզբից ձեռնամուխ եղավ նաև իր տեղական օրգանների բաժանմունքների և լիազորությունների կազմակերպմանը։

Հայկական Գործերի Կոմիսարիատը Ռուսաստանի այն բոլոր նահանգներում և քաղաքներում, որտեղ կենտրոնացված էր զգալի թվով հայ բնակչություն, տեղական սովետներին կից 1918—1919 թթ. կազմակերպեց իր տեղական բաժանմունքները, լիազորությունները և տեղական սովետների ազգային փոքրամասնությունների բաժիններում՝ իր ենթաբաժինները կամ սեկցիաները։ Այսպես, կազմակերպեց ութ բաժանմունք հետևյալ քաղաքներում՝ Աստրախանում, Սարատովում, Խարկովում, Արմավիրում, Պյատիգորսկում, Ցարիցինում (Ստալինգրադ), Ռոստովում և Բաքվում։ Կազմակերպվեցին նաև տասներկու լիազորություններ հետևյալ քաղաքներում՝ Պետրոգրադում (Լենինգրադ), Վլադիկավկազում (Զաուջիկաու), Դերբենտում,

Կոկանդում, Աշխաբադում, Կիևում, Օդեսայում, Նիկոլաևում, Մինսկում, Եկատերինոդարում (Կրասնոդար), ինչպես նաև Սիբիրում և Ղրիմի քաղաքներում։

Հայկական Գործերի Կոմիսարիատը դեռ իր հիմնադրման օրերին ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի ազատագրության համար վճռական նշանակություն ունեցող հետևյալ խնդիրների լուծմանը։

Առաջին՝ Ազգությունների Գործերի ժողկոմ ընկեր Ստալինի հանձնարարությամբ Վ. Ավանեսովը և Վ. Տերյանը նախապատրաստական անհրաժեշտ աշխատանք կատարեցին Արևմտյան Հայաստանի հարցը ժողկոմսովետում քննարկելու և «Թյուրքահայաստանի մասին» դեկրետը ընդունելու ուղղությամբ, դեկրետ, որը պատկանում է ընկեր Ստալինի գրչին։ Հայկական Գործերի Կոմիսարիատը պետք է խոշոր դեր խաղար այդ դեկրետի իրագործման հարցում։

Երկրորդ՝ ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ Վ. Ի. Լենինը և Ազգությունների Գործերի ժողկոմ ընկեր Ստալինը հանձնարարեցին Հայկական Գործերի Կոմիսարիատին Հայաստանի մասին նյութեր պատրաստել, որպեսզի Սովետական դելեգացիան, Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններում, հայ ժողովրդի շահերը պաշտպանելու հնարավորություն ունենա գերմանա-թյուրքական ագրեսիայից։

Վ. Ի. Լենինի ստորագրությամբ տրված վկայականով Վ. Տերյանը, որպես Հայկական Գործերի Կոմիսարիատի կոլեգիայի անդամ, մասնակցեց Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններին։

Երրորդ՝ Հայկական Գործերի Կոմիսարիատը իր կազմակերպման հենց առաջին շրջանում բախվեց Ռուսաստանում գոյություն ունեցող հայ բուրժուանացիոնալիստական կոնտրռևոլուցիոն պարտիաների և կազմակերպությունների հետ, որոնք հավակնություն ունեին ներկայացնելու հայ ժողովրդին։ Կոմիսարիատի առաջնահերթ խնդիրն էր՝ լիկվիդացնել կոնտրռևոլյուցիոն այդ բոլոր կազմակերպությունները։

Չորրորդ՝ Հայկական Գործերի Կոմիսարիատը, չնայած իր կադրերի խիստ պակասին, Անդրկովկաս ուղարկեց 30 պրոպագանդիստներ՝ Սովետական իշխանության գաղափարները հայ աշխատավորության մեջ տարածելու համար։ Սրանք այն միջոցառումներն էին, որ ընկեր Ստալինի հանձնարարությամբ ձեռնարկեց Հայկական Գործերի Կոմիսարիատը դեռևս իր հիմնադրման օրերին։

Դժվարին ու ծանր պայմաններում սկսվեց Հայկական Գործերի Կոմիսարիատի վայելուն գործունեությունը, որը ընդգրկում էր հայ ժողովրդի կյանքի գրեթե բոլոր հարցերը։

Հայկական Գործերի Կոմիսարիատի ստեղծման լուրը Թիֆլիսի «Հայոց ազգային խորհուրդը» դիմավորեց սվիններով։ Այնուհետև դաշնակցական «կառավարությունը» կատաղի պրովոկացիա սկսեց Հայկական Կոմիսարիատի դեմ և բոլոր ստոր միջոցներով փորձում էր կասեցնել նրա ազդեցության տարածումը Հայաստանի և Անդրկովկասի հայ աշխատավորության մեջ։

Դրան հակառակ ինչպես Անդրկովկասի ու Հայաստանի, այնպես էլ Սովետական Ռուսաստանի տերիտորիայում բնակություն հաստատած հայ աշխատավորությունը ջերմորեն ընդունեց Հայկական Գործերի Կոմիսարիատի ստեղծումը, Կոմիսարիատին ընդունելով որպես հայ աշխատավորության իղձերի, սպասումների և շահերի իսկական արտահայտիչ ու ներկայացուցիչ

Սովետական պետության այնպիսի հեղինակավոր օրգանում, ինչպիսին էր ընկեր Ստալինի գլխավորած Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը։

* * *

Սովետական իշխանության գաղափարները Ռուսաստանի ժողովուրդների մեջ տարածելու նպատակով, Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը ձեռնամուխ եղավ հրատարակչական գործի կազմակերպմանը։ Ընկեր Ստալինը առաջին հերթին հոգաց ժողկոմատի այնպիսի պաշտոնական օրգան ստեղծելու մասին, որը լիներ բոլշևիկյան մարտական թերթ, իր էջերում լուսաբաներ Ռուսաստանի ժողովուրդների կյանքն ու պայքարը, պրոպագանդեր բոլշևիկյան պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը։ Հենց այդպիսի թերթ էր ընկեր Ստալինի ղեկավարությամբ հրատարակվող „Жизнь национальностей" թերթը, որը հանդիսանում էր Ազգժողկոմատի պաշտոնական օրգանը։ „Жизнь национальностей" թերթը ուղղություն էր տալիս և օրինակ հանդիսանում ազգային կոմիսարիատների մամուլի օրգանների համար։

Նա հսկայական աջակցություն ցույց տվեց բոլշևիկյան պարտիայի ազգային կազմակերպություններին, տալով նրանց ղեկավար ցուցումներ լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության կենսագործման ասպարեզում։ „Жизнь национальностей" թերթը ավելի քան 70 խմբագրական և այլ հոդվածներ է տպագրել հայ աշխատավորության պայքարի մասին, որոնք այժմ ստույգ և արժեքավոր աղբյուր են հանդիսանում ինչպես Հայաստանի բոլշևիկների՝ Սովետական իշխանության հաստատման համար մղած պայքարի պատմության, այնպես էլ Հայկական Գործերի Կոմիսարիատի գործունեության ուսումնասիրության համար։

Պրոլետարիատի մեծ առաջնորդներ Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը բացառիկ նշանակություն էին տալիս ազգային լեզուներով բոլշևիկյան մամուլ և սոցիալիստական գրականություն ստեղծելու գործին։ Նրանք անձամբ զբաղվում էին Ազգժողկոմատի ազգային կոմիսարիատներում հրատարակչական գործի կազմակերպման հարցերով և աջակցում էին այդ կոմիսարիատներին՝ Սովետական իշխանության դեկրետներն ու կարգադրությունները, ինչպես նաև կոմունիստական գրականությունը ազգային լեզուներով թարգմանելու և տարածելու գործում։ Ընկեր Ստալինի առաջարկությամբ բոլոր ազգային կոմիսարիատներում և բաժիններում ստեղծվեցին հրատարակչության, մամուլի և գրականության բաժիններ, որոնք ձեռնամուխ եղան հրատարակչական լայն գործունեության։

1918—1920 թթ. հրատարակչական հսկայական գործունեություն ծավալեց նաև Հայկական Գործերի Կոմիսարիատը։ Նա իր հիմնադրման հենց սկզբից զբաղվեց իր պաշտոնական օրգանի ստեղծման հարցով։

Կոմիսարիատը ՌՍՖՍՌ Կենտգործկոմի միջոցով Հայկական տառեր ձեռք բերելուց հետո, 1918 թ. մայիսից ստեղծեց իր տպարանը։ Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ Վ. Ավանեսովի և Վ. Տերյանի գործադրած ջանքերի շնորհիվ 1918 թվականի հունիսի 22-ին լույս է տեսնում Հայկական Գործերի Կոմիսարիատի պաշտոնական օրգան «Կոմունիստ» շաբաթաթերթի առաջին համարը։

«Կոմունիստ»-ը Սովետական իշխանության կենտրոնական թերթերից էր և

տպագրում էր Սովետական իշխանության դեկրետները, որոշումները և պետական մյուս ակտերը։ Թերթի էջերում սիստեմատիկաբար տպագրվում էին Լենինի հոդվածները, ճառերը, զեկուցումները և Ազգժողկոմատի դեկրետները։ «Կոմունիստ»-ը իր ամբողջ ուժերը նվիրել էր Հայաստանում Սովետական իշխանություն հաստատելու գործին։ Այդ նպատակով նա իր էջերում սիստեմատիկաբար մերկացնում էր հայ ժողովրդի բոլոր թշնամիներին, դիմակազերծանում գերմանա-թյուրքական իմպերիալիզմի հայաջինջ նվաճողական քաղաքականությունը և Անտանտայի իմպերիալիստական պետությունների ստոր ու դիվային մեքենայությունները Անդրկովկասում և Հայաստանում։ Թերթը մերկացնում էր Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոներներին, պատմական անհերքելի փաստերով անարգանքի սյունին էր գամում դաշնակցությանը, որպես հայ ժողովրդի շահերը անգլո-ամերիկյան իմպերիալիստներին վաճառողի։

Թերթը կոչ էր անում հայ աշխատավորությանը՝ համախմբվել ռուս պրոլետարիատի և Սովետական իշխանության ազատարար դրոշի շուրջը։

Թերթի № 1-ում տպագրվեց Հայկական Գործերի Կոմիսարիատի «Նամակ հայ գյուղացիներին ու բանվորներին» կոչը, որի հեղինակն էր Վ. Տերյանը։ Կոչը վերջանում էր հետևյալ խոսքերով. «Մենք միշտ քարոզել ենք և այժմ էլ անդադար պիտի քարոզենք, որ հայ աշխատավոր ժողովրդի փրկությունը Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանության հզորության մեջ է և ով դեմ է խորհուրդների իշխանությանը, նա դավաճան է, նա ժողովրդի թշնամին է և ահա մենք, հայ կոմունիստ բոլշևիկներս, կոչ ենք անում Ձեզ, հայ գյուղացիներ և հայ բանվորներ՝ միացեք Ռուսաստանի խորհուրդների Կարմիր գնդերին, ուժ տվեք նրանց, որովհետև բանվորական և գյուղացիական Ռուսաստանի Սոցիալիստական Կարմիր գնդերն են, որ պիտի մի գեղեցիկ օր եղբայրական ձեռք մեկնեն տանջված ու կեղեքված, մահացու վտանգի մեջ գտնվող հայ գյուղացուն ու բանվորին, միայն Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանության Կարմիր գնդերն են, որ կարող կլինեն ազատություն ավետել արյունաներկ երկրին...»[1]։

«Կոմունիստ» թերթի խմբագրական աշխատանքը Հայկական Գործերի Կոմիսար Վ. Ավանեսովը և տեղակալ Վ. Տերյանը կատարում էին Լենինի և Ստալինի ցուցումներով։

Հայկական Գործերի Կոմիսարիատի կոլեգիայի հաստատած ցուցակով «Կոմունիստ»-ի համարները անլեգալ ճանապարհներով ուղարկվում էին Անդրկովկաս, իսկ կոմիսարիատի տեղական բաժանմունքների, լիազորությունների և էմիսարների միջոցով՝ Սովետական Ռուսաստանում ապրող հայ աշխատավորությանը։[2]

1919 թվականին Հայկական Գործերի Կոմիսարիատի հրատարակությամբ, լույս էր տեսնում «Կարմիր դրոշակ» թերթը, որը զգալի աշխատանք կատարեց անգլո-ամերիկյան և ֆրանսիական իմպերիալիզմի գաղութային քաղաքականությունը Անդրկովկասում և Հայաստանում մերկացնելու և հայ աշխատավորությանը Սովետական իշխանության շուրջը համախմբելու գործում։

Հայկական Գործերի Կոմիսարիատը 1918—1920 թթ. իր բաժանմունքների միջոցով, տեղական պարտիական կոմիտեների ղեկավարությամբ, հայերեն հրատարակում էր մի շարք թերթեր։

[1] «Կոմունիստ» № 1, 22 հունիսի 1918 թ.։

[2] См. ЦГАОР, ф. 1318, д. 114, л. 15.

1918 թվականին հրատարակվում էր Պյատիգորսկի բաժանմունքի օրգան «Կարմիր օրեր» թերթը, 1918 թվականին՝ Արմավիրի բաժանմունքի օրգան «Բանվորի ձայն» թերթը, 1919 թ.՝ Աստրախանում տեղի բաժանմունքի հրատարակությամբ լույս էր տեսնում «Կարմիր բանվոր» թերթը, 1920 թվականին Դոնի Ռոստովում՝ «Բանվորի կռիվ» թերթը, այդ նույն թվականին Կրասնոդարում՝ «Կարմիր աստղ» թերթը։

1918—1920 թթ. Հայկական Գործերի Կոմիսարիատը ընկեր Ստալինի անմիջական ցուցումներով խոշոր աշխատանք ծավալեց նաև կոմունիստական ինքնուրույն և թարգմանական գրականության հրատարակության ու տարածման ուղղությամբ։ Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ կոմիսարիատը թարգմանեց և հրատարակեց 80 անուն գիրք, որոնց ընդհանուր տիրաժը հասնում էր 422 հազարի[1]։

Կոմիսարիատը առաջին հերթին թարգմանում և հրատարակում էր մարքսիզմի կլասիկների աշխատությունները, Սովետական իշխանության դեկրետները և կարգադրությունները, քաղաքական, գեղարվեստական գրքեր, ինչպես նաև դասագրքեր Սովետական Ռուսաստանի Հայկական դպրոցների համար։

Հայկական Գործերի Կոմիսարիատի թարգմանությամբ լույս տեսան Լենինի մի շարք աշխատությունները, հոդվածները և ճառերը, այդ թվում՝ «Նամակ ամերիկյան բանվորներին», «Կարլ Մարքս», «Ռուսաստանի քաղաքական պարտիաները և պրոլետարիատի տակտիկան», «Երրորդ ինտերնացիոնալը և նրա տեղը պատմության մեջ», «Ինչպես պետք է կոչվի մեր պարտիան», «Պետություն և ռևոլյուցիա», «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» և այլն։

Մարքսի և Էնգելսի աշխատություններից թարգմանվել և հրատարակվել են՝ «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը», Էնգելսի «Ռևոլյուցիան և կոնտրռևոլյուցիան Գերմանիայում» և այլն։

Հայկական Գործերի Կոմիսարիատը այդ նույն ժամանակաշրջանում հրատարակեց նաև 8 անուն ինքնուրույն աշխատություններ, այդ թվում՝ Վ. Ավանեսովի «Հայ փախստականներին», Վ. Տերյանի «Ինչ է ասում Լենինը գյուղացիներին», Ալեքսանդր Մյասնիկյանի «Ազգային հարցի մասին» աշխատությունները և այլ գրքեր։

Հայկական Գործերի Կոմիսարիատը իր հրատարակած թերթերի և գրականության զգալի մասը անլեգալ ճանապարհներով ուղարկում էր Հայաստան։

* *

Հայկական Գործերի Կոմիսարիատը բեղմնավոր գործունեություն ծավալեց նաև հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրայի ստեղծման առաջին շրջանում։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, փշրելով ազգային կեղեքման շղթաները, Ռուսաստանի նախկինում ճնշված ժողովուրդներին լայն հնարավորություն տվեց անցնելու նոր, սոցիալիստական կյանքի կառուցմանը։ Իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցնելուց անմիջապես հետո, ազգային կուլտուրայի զարգացման հարցը դարձավ բոլշևիկյան պարտիայի և Սովետական կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը։

Բոլշևիկների պարտիան և Սովետական իշխանությունը Ազգություններ-

[1] См. ЦГАОР, ф. 1318, д. 630, л. 148.

Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի առջև դրեցին Ռուսաստանի ժողովուրդների՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ստեղծման խնդիրը։

Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը և նրա ազգային կոմիսարիատները և բաժինները՝ ղեկավարվելով պարտիայի ու կառավարության ցուցումներով, 1918 թվականի սկզբից ընդհուպ զբաղվեցին կուլտուրական շինարարության հարցերով։

1918 թվականի ապրիլի 26-ին Ազգժողկոմատի կոլեգիան հատուկ քննության ենթարկեց այդ հարցը, հանձնարարեց կոմիսարիատներին և բաժիններին՝ աշխատավորության համար բաց անել գրագիտության դպրոցներ, ակումբներ, հրատարակել ազգային լեզուներով թերթեր և գրականություն, բաց անել ժողովրդական համալսարաններ, շրջիկ թատրոններ, ցուցահանդեսներ, թանգարաններ և այլն[1]։

Կենսագործելով Ազգժողկոմատի կոլեգիայի որոշումները և ընկեր Ստալինի ամենօրյա ցուցումները, ազգային կոմիսարիատները, այդ թվում և Հայկական Կոմիսարիատը, լայն և եռուն աշխատանք ծավալեցին ազգությունների կուլտուր-լուսավորական և կրթության գործը կազմակերպելու ուղղությամբ։

Ընկեր Ստալինը Հայկական Գործերի Կոմիսարիատի առաջ խնդիր դրեց՝ Ռուսաստանի հայկական դպրոցները, հատկապես Լազարյան ճեմարանը դուրս բերել հայ բուրժուազիայի և կղերականության գաղափարական ազդեցությունից և ծառայեցնել հայ աշխատավորության շահերին։

1918 թվականի հունիսի 22-ին ՌՍՖՍՌ Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի և Հայկական Գործերի Կոմիսարիատի կոլեգիաների համատեղ որոշմամբ, Լազարյան ճեմարանի ղեկավարությունը հանձնվեց Հայկական Կոմիսարիատին և նշանակվեց կոմիսար, որի վրա դրվեց ճեմարանի կառավարման ամբողջ պատասխանատվությունը։ 1918 թվականի հունիսի 28-ին ՌՍՖՍՌ Լուսժողկոմատը վերացրեց Լազարյան ճեմարանի հոգաբարձուի կոչումը և ճեմարանին կից գոյություն ունեցող հասարակական կոմիտեն։ Լազարյան ճեմարանը կոչվեց Մոսկվայի Հայկական ինստիտուտ։

Ընկեր Ստալինի հանձնարարությամբ Հայկական Գործերի Կոմիսարիատը ստեղծում է հայկական ինստիտուտի կանոնադրությունը մշակող հանձնաժողով, որի աշխատանքը ղեկավարում էր Վ. Տերյանը։ Մշակված կանոնադրության նախագիծը կոմիսարիատի կոլեգիայում քննելուց և Ազգժողկոմատի հավանությունը ստանալուց հետո ներկայացվում է Ժողկոմսովետի հաստատմանը։

1919 թվականի մարտի 4-ին Ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի ստորագրությամբ ընդունում է «Դեկրետ Մոսկվայում գտնվող Հայկական ինստիտուտի մասին»[2]։

Այդ դեկրետում ասված է, որ Հայկական ինստիտուտը, որն սպասարկում է հայ աշխատավոր մասսաների կուլտուր-լուսավորական կարիքները, կազմված է առաջին և երկրորդ աստիճանի միասնական աշխատանքային դպրոցներից, որտեղ դասավանդումը կատարվում է հայերեն լեզվով և պատմա-ֆիլոլոգիական ու սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետներից, որտեղ դասավանդումը կատարվում է ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն լեզուներով։

[1] См. ЦГАОР, ф. 1318, д. 20, л. 10.

[2] „Известия" ВЦИК, № 55 от 12 марта 1919 г.

Այդ դեկրետով ինստիտուտի ղեկավարությունը դրվում էր Հայկական Գործերի Կոմիսարիատի և ՌՍՖՍՌ Լուսժողկոմատի վրա։

Նախկին Լազարյան ճեմարանին պատկանող ամբողջ գույքը թողնվում է ինստիտուտին։

Հայկական ինստիտուտի պահպանության համար գումարները բաց էր թողնում ՌՍՖՍՌ Լուսժողկոմատը։

Հայկական ինստիտուտի աշակերտությունը պետության հաշվին ապահովվում էր օրապահիկով և հանրակացարանով։ Դասագրքերը և գրենական պիտույքները տրվում էին ձրի։ Որքերին տրվում էր հագուստ։ Հայկական ինստիտուտում, առաջին ուսումնական տարին սկսվեց 1918 թվականի հոկտեմբերի 21-ին։

Հայկական Գործերի Կոմիսարիատը մեծ աշխատանք կատարեց Ռուսաստանի նաև մյուս հայկական դպրոցների արմատական վերակառուցման և սովետական նոր դպրոցի հիմնադրման գործում։ Կոմիսարիատը իր տեղական բաժանմունքների, լիազորությունների և ներկայացուցիչների (որոնք այն ժամանակ կոչվում էին էմիսարներ) միջոցով մաքրեց դպրոցական վարչությունները և խորհուրդները նացիոնալիստական կոնտրռևոլյուցիոն տարրերից, դասատուական կազմից վտարեց դաշնակներին և կղերականներին։ Անցկացրեց դպրոցների, դասատուների, դպրոցական շենքերի և ուսումնական պիտույքների ստույգ հաշվառում, որի հիման վրա դրեց Հայկական դպրոցները սովետական դպրոցի հիմունքներով վերակառուցելու հարցը։ Նկատի ունենալով հայ գաղթականության խոշոր զանգվածների առկայությունը Ռուսաստանի հարավում, 1918—1919 թվականների ընթացքում ՌՍՖՍՌ Լուսժողկոմատի թույլտվությամբ կոմիսարիատը բաց արեց նոր հայկական դպրոցներ՝ Ռոմավիրում, Պյատիգորսկում, Կիսլովոդսկում, Վլադիկավկազում, Սարատովում, Աստրախանում, Ցարիցինում, Դոնի-Ռոստովում, Եկատերինոդարում, Ստավրոպոլում։ Դպրոցներ բացվեցին նաև Միջին Ասիայի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Ղրիմի մի շարք քաղաքներում։

Հայկական Գործերի Կոմիսարիատը մեծ աշխատանք կատարեց նաև հասակավոր հայ աշխատավորների անգրագիտության վերացման ուղղությամբ։ Կոմիսարիատի և նրա տեղական օրգանների կազմակերպած բազմաթիվ գրագիտական դպրոցներում ընդգրկվեցին հազարավոր հայ աշխատավորներ, որոնք մեծ սիրով ու եռանդով սովորում էին գրել ու կարդալ։

Կոմիսարիատի կարևոր աշխատանքներից մեկը Սովետական իշխանության դաղափարների պրոպագանդայի կազմակերպումն էր հայ աշխատավորության լայն շրջաններում։

Սովետական Ռուսաստանի հայաբնակ քաղաքներում կազմակերպվում էին հարյուրավոր դեկուցումներ և դասախոսություններ քաղաքական, միջազգային դրության և գիտա-պոպուլյար թեմաների շուրջը։ Կոմիսարիատը 1918—1919 թվականներին մի քանի անգամ կազմակերպեց ագիտատորների և պրոպագանդիստների դասընթացներ և պրոպագանդիստների դպրոցներ, որոնց ունկնդիրներին ուղարկում էր տեղերում դեկուցումներ կարդալու։

Աշխատավորության առաջ հաճախ դեկուցումներով հանդես էին գալիս կոմիսար Ավանեսովը, Վ. Տերյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Ա. Մռավյանը, Դ. Աթաբրեկյանը և ուրիշները։

Վերոհիշյալ ձեռնարկումներից բացի Հայկական Գործերի Կոմիսարիատը բացեց բազմաթիվ աշխատավորական ակումբներ։

Ակումբներին կից կազմակերպվեցին գրադարաններ, թատերական և ինքնագործ խմբակներ, որոնք սպասարկում էին տասնյակ հազարավոր հայ աշխատավորների։ Ակումբների շուրջը համախմբվեցին ագիտատորներ, ուսուցիչներ, դերասաններ, երգիչներ, երաժշտական խմբեր և հայ ինտելիգենցիայի բազմաթիվ այլ ուժեր։ Ակումբները վերածվեցին և դարձան աշխատավորության քաղաքական դաստիարակության, կուլտուրական սպասարկման իսկական օջախներ։ 1918 թ. կոմիսարիատում կազմակերպվեց հնությունների և արվեստի ենթաբաժին, որի նախաձեռնությամբ Մոսկվայում հիմնվեց Հայկական թանգարան, որտեղ զետեղվեցին հայ լավագույն քանդակագործների և նկարիչների գործերը։ Հայկական Կոմիսարիատին կից 1918 թվականին հիմնադրվեց թատերական ստուդիա։

Այսպիսով, Հայկական Գործերի Կոմիսարիատը Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ղեկավարությամբ ու ցուցումներով բեղմնավոր աշխատանք կատարեց հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրայի կառուցման առաջին ժամանակաշրջանում։

Սակայն, Անդրկովկասից և Հայաստանից կտրված լինելու հետևանքով, Հայկական Գործերի Կոմիսարիատի միջոցառումները կիրառվում էին հիմնականում Սովետական Ռուսաստանում բնակվող հայ աշխատավորության շրջանում։ Օտարերկրյա ինտերվենտների և ցարական ծախու գեներալների ռազմական գործողությունները Սովետական իշխանության դեմ, ինչպես նաև դաշնակների արյունոտ տիրապետությունը, Հայաստանի աշխատավորությանը զրկել էին ժամանակին այս բարիքներից օգտվելու հնարավորությունից։

Հայկական Գործերի Կոմիսարիատի կատարած կուլտուր-լուսավորական բազմաբովանդակ աշխատանքները կարևոր նշանակություն ունեցան սովետա-հայ կուլտուրայի հետագա զարգացման համար։

* *

Սովետական պետության լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը կենսագործելու, Ռուսաստանի բազմաթիվ ժողովուրդներին ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու և սովետական շինարարության մեջ ներգրավելու գործում հսկայական աշխատանք կատարեցին Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի, այդ թվում նրա Հայկական Գործերի Կոմիսարիատի տեղական օրգանները։ Նրանք անմիջապես գործելով աշխատավորության լայն մասսաների մեջ, նրանց համար հասկանալի լեզվով տարածում էին կոմունիզմի մեծ գաղափարները։ Միևնույն սովետում տարբեր ազգությունների համատեղ գործունեությունը հանդիսանում էր ժողովուրդների ինտերնացիոնալ միասնությունը և եղբայրությունը կոփելու ստալինյան դպրոց։

Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը մեծ նշանակություն տալով ազգային կոմիսարիատների տեղական օրգանների գործունեությանը, ձեռք էին առնում անհրաժեշտ միջոցներ՝ այդպիսիք կազմակերպելու այն բոլոր սովետներին կից, որտեղ բնակվում են տարբեր ազգության պատկանող աշխատավորներ։

1918 թվականին, երբ Բաքվի սովետը գտնվում էր ներքին և արտաքին թշնամիների օղակում, Բաքվի՝ ադրբեջանցի և հայ աշխատավոր մասսաների ռևոլյուցիոն ուժերը թշնամու դեմ միավորելու նպատակով, ընկեր Ստալինը

Ստ. Շահումյանին և Ջափարիձեին ուղղած մարտի 19-ի իր նամակում գրում էր. «...հարկավոր է Բաքվի սովետին կից անհապաղ հիմնել մուսուլմանական բաժին, լայնորեն զարգացնել մուսուլմանական գրականությունը, հարկավոր է հիմնել նույնպիսի Հայկակոն բաժին և առհասարակ մուսուլմանական-հայկական ստորին խավերին Սովետի շուրջը համախմբելու քաղաքականություն վարել իրենց վերնախավերի դեմ նրանց պայքարում...»[1]։

Ընկեր Ստալինի անմիջական ցուցումներով Հայկական Գործերի Կոմիսարիատը, ինչպես տեսանք, ստեղծել էր տեղական օրգանների բավականաչափ լայն ցանց, սկսած Սիբիրից, Միջին Ասիայից մինչև Բաքու և Բելոռուսիա։

Հայկական Գործերի Կոմիսարիատը իր տեղական օրգանները ստեղծում էր հաճախ բախվելով հայ բուրժուազիայի և կղերականության թշնամական դիմադրությանը, առանց որի մերկացման ու ջախջախման հնարավոր չէր ծավալուն աշխատանք սկսել հայ աշխատավորական լայն մասսաների մեջ։

Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, Հայկական Գործերի Կոմիսարիատի տեղական օրգանները աշխատավորության մեջ կատարեցին վիթխարի աշխատանք։

Այդ օրգանները զբաղվել են հայ աշխատավորության կյանքին վերաբերող բոլոր հարցերով։ Նրանք կազմակերպել են դպրոցներ, որբանոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, բացել են արհեստագործական դպրոցներ, զբաղվել են գաղթական հայերին բնակարաններով ու աշխատանքով ապահովելու հարցերով, բաժանել են հագուստեղեն և դրամ, կազմակերպել են ճաշարաններ, սնուցման կետեր և այլն։ Այդ օրգանները կազմակերպել են դասախոսություններ, բաց են արել ակումբներ, զարգացրել են աշխատավորների ինքնագործունեությունը. հրատարակել են թերթեր, պրոկլամացիաներ, բրոշյուրներ և այլն։

Հայկական Գործերի Կոմիսարիատի, ինչպես նաև Ազգժողկոմատի մյուս ազգային կոմիսարիատների և բաժինների տեղական օրգանները, Ազգժողկոմատից ստանալով սիստեմատիկ ղեկավարություն և օգնություն, պատվով կատարեցին այն խնդիրները, որ դրել էին նրանց վրա պրոլետարիատի մեծ առաջնորդներ Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը։

* * *

Հայկական Գործերի Կոմիսարիատի գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում հայ գաղթականությանը ցույց տրված նյութական և բարոյական բացառիկ օգնությունը։ Հայտնի է, որ գերմանա-թյուրքական արյունարբու հրոսակախմբերի խոշտանգումներից ու կոտորածից փրկված հարյուր հազարավոր հայ գաղթականներ ապաստան էին գտել Ռուսաստանում։

Ռուս մեծ ժողովուրդը գրկաբաց ընդունեց հայ գաղթականությանը և գթառատ հոգատարությամբ իր հարկի տակ ապաստան տվեց հայ գաղթականությանը։

Սովետական կառավարությունը, անձամբ Լենինը և Ստալինը հայ ժողովրդի ողբերգության այդ դառն օրերին մեծագույն հոգատարություն ցուցաբերեցին նրա նկատմամբ։

[1] Մ. Զ. Բագիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, Երևան, Պետհրատ, 1944, էջ 164—165։

Հայ գաղթականությանը ընդունելու, նրանց համար ապրելու հարմարություններ ստեղծելու, աշխատանքով ապահովելու և օգնություն ցույց տալու նպատակով, ընկեր Ստալինի ցուցումներով Հայկական Գործերի Կոմիսարիատում կազմակերպվեց գաղթականության և սոցիալական օգնության բաժին։ Կոմիսարիատը այդպիսի բաժիններ կազմակերպեց նաև իր խոշոր բաժանմունքներին կից։ Տեղական Սովետներին կից ստեղծվեցին գաղթականներին օգնող հանձնաժողովներ։

1918 թվականի հունիսին Սովետական կառավարությունը Հայկական Գործերի Կոմիսարիատին՝ Աստրախանի և Հյուսիսային Կովկասի հայ գաղթականներին օգնելու նպատակով, բաց է թողնում վեց միլիոն ռուբլի։ Վ. Տերյանի գլխավորած ջոկատը, որը դրամից բացի իր հետ տանում էր երկու վագոն ապրանք՝ դեղորայք, հագուստեղեն և գրականություն, հուլիսի 29-ին մեկնեց Մոսկվայից[1]։ Դա առաջին ջոկատն էր։ Այդպիսի բազմաթիվ ջոկատներ ուղարկվեցին Ռուսաստանի այն բոլոր նահանգները, որտեղ կուտակված էին հայ գաղթականները։

Պովոլժյեի հայ գաղթականությանը օգնելու համար կազմակերպված ջոկատը, որը մեկնեց 1918 թվականի հոկտեմբերի 1-ին, իր հետ տարավ երկու միլիոն ռուբլի, երկու վագոն հագուստեղեն և դեղորայք։ Այդ ջոկատին, Հայկական Կոմիսարիատի կողմից, ինչպես գրում է Տերյանը, հրահանգված էր կատարել հետևյալ աշխատանքները։

«Կազմակերպել ա) սանիտարական օգնություն, բ) սնունդ-սննդակետեր (թեյարաններ և ճաշարաններ), գ) աշխատանք (բանվորական ջոկատների. կարի, ատաղձագործության, կոշկակարության, դարբնոցային, փականագործական, արհեստանոցների կազմակերպում և այլն), դ) օգնություն երեխաներին (երեխաների առանձնացումը ընդհանուր զանգվածից), որբանոցներ որբերի համար, երեխաների համար մանկապարտեզներ և տարրական դպրոցներ»[2]։

Միայն 1918—1919 թվականների տասը ամսվա ընթացքում հայ գաղթականությանը կենտրոնացված կարգով որպես նպաստ բաժանվել է ավելի բան տասը միլիոն ռուբլի։ Այդ նույն ժամանակամիջոցում բաժանվել է նաև 200.000 արշին կտորեղեն, 30.000 կտոր պատրաստի հագուստ և մեծ քանակությամբ կոշկեղեն[3]։

Սովետական կառավարության բոլոր ջանքերը, օգնություն կազմակերպել նաև Անդրկովկասի և Հայաստանի գաղթականությանը չհաջողվեց, Սովետական կառավարության և նրա ձեռնարկումների հանդեպ դաշնակցական «կառավարության» բռնած թշնամական դիրքի հետևանքով։

Հայկական Գործերի Կոմիսար Վ. Ավանեսովը 1919 թվականի օգոստոսին հայ գաղթականությանը ուղղված կոչում ասում էր. «Միայն սոցիալիստական Ռուսաստանը— Սովետների իշխանությունն է, որ եղբայրաբար բաժանում է հայ ժողովրդի տառապանքներն ու ցավերը և օգնության հասնում հայ գաղթականներին»[4]։

Երախտապարտ հայ գաղթականները իրենց շնորհակալական խոսքը բազմաթիվ բանաձևերում, նամակներում և հեռագրերում ուղղում էին Սովե-

[1] См. ЦГАОР, ф. 1318, д. 40, л. 92.
[2] Там же, л. 93.
[3] См. „Жизнь национальностей", № 34 (42) от 7 сентября 1919 г.
[4] Там же.

տական կառավարությանը, բոլշևիկների պարտիային, մեծ Լենինին և Ստալինին, այն մարդասիրական վարմունքի և մեծ օգնության համար, որ ցույց տվեցին նրանք հայ գաղթականությանը։

Սարատովի հայ գաղթականների միտինգի 1919 թվականի բանաձևում ասված է.

«Համաշխարհային իմպերիալիստական պատերազմի հետևանքով օթևանից զրկված և Սովետական Ռուսաստանում ապաստան գտած տաճկահայ գաղթականների զանգվածը, եղբայրական ողջույն է հղում և երախտապարտության զգացմունք է հայտնում ռուսական ռևոլյուցիոն պրոլետարիատին և գյուղացիությանը ի դեմս Ժողովրդական Կոմիսարների Սովետի, նրանց կողմից ցուցաբերած ընդառաջման և ընկերական աջակցության համար»[1]։

Մի ուրիշ նամակում ասված է.

«Մենք, Տաճկահայաստանի վրա իշխող բռնակալների երկաթյա ճնշման տակ դարեր շարունակ արյուն-արցունք թափող ժողովրդի բեկորներս, արյունոտ, սրտաճմլիկ շատ պատմելիք ունենք աշխարհը ավերած իմպերիալիստական պատերազմի մասին։ Արյունարբու բռնակալները իրենց երկաթյա ճիրանները խրեցին մեր սրտերում, հագեցան մեր արյունով, ավերեցին մեր հայրենի օջախները և լափեցին քրտինքով ձեռք բերած մեր հացը։ Մենք չգըտանք աջակցող ձեռք, որը ի պատասխան մեր ողբին, օգներ մեզ մեր կարիքի և վշտի մեջ, տանջանքների մատնված մենք քարշ էինք տալիս մեր կյանքը՝ թափառելով սար ու ձոր, քաղցած ու մերկ, մինչև ոտք չդրինք այն հողը, որին հովանի է ռևոլյուցիոն կարմիր դրոշը — Սովետական ռեսպուբլիկայի տերիտորիան։ Այստեղ մենք գտանք եղբայրական ջերմ ընդունելություն, բարոյական և նյութական լրիվ աջակցություն։ Օթևանի, հագուստեղենի և սննդի հետ միասին մենք կարողացանք ապրել հոգեկան աշխարհի և կուլտուրայի քաղցրություն, ֆիզիկապես ուժասպառ և բարոյական առնականությունը կորցրած մեր այս կացության մեջ, մեզ օգնության եկավ Ռուսաստանի Սովետական Ռեսպուբլիկան... Հայկական Գործերի Կոմիսարիատը։ Այս բանի համար մենք նրանց արտահայտում ենք անկեղծ ու ջերմ շնորհակալություն և միշտ ի լուր բոլորին, կասենք նրանց ընդօրինակման արժանի գործունեության մասին։

Կեցցե՛ Ռուսաստանի Սովետական Ռեսպուբլիկան։

Կեցցե՛ն բանվորների ու գյուղացիների իրավունքները պաշտպանող պարտիայի կազմակերպիչ և ղեկավար մեծ ընկերները»[2]։

Հայկական Գործերի Կոմիսարիատը ծավալեց մեծ աշխատանքներ հայ գաղթականներին Հայաստան փոխադրելու ուղղությամբ։ Նա վերահաշվառման ենթարկեց բոլոր գաղթականներին, կազմվեցին քարավանների հերթականություն։ Կոմիսարիատը բանակցություններ մեջ մտավ Կարմիր Խաչի միջազգային ընկերության, Անդրկովկասի կառավարությունների հետ։ Սակայն, չնայած այդ բոլորին, 1919—20 թվականներին Սովետական կառավարությանը չհաջողվեց կազմակերպել հայ գաղթականների մասսայական վերադարձը հայրենիք։ Հայերի մասսայական վերադարձի գործին խանգարում էին առաջին հերթին Ամերիկայի, Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստական պետությունները, որոնց գաղութային գիշատիչ քաղաքականության զոհերից մեկը հենց ինքը՝ հայ ժողովուրդն էր։

[1] ЦГАОР, ф. 1318, д. 40, л. 105—106.
[2] Там же, л. 104.

Հայկական Գործերի Կոմիսար Վ. Ավանեսովը հայ դաղթականներին ուղղած կոչի մեջ գրում էր. «Հայկական կառավարությունն ու եվրոպական իմպերիալիստները ոչ միայն մատը մատին չեն խփել— այլ ամեն կերպ արգելը են հանդիսացել մեր բոլոր քայլերին, այն է Ձեր վերադարձին։ Ռմբակոծել ու ետ են դարձրել մեր ուղարկած նավերը, սարսափելով, որ Դուք հայ աշխատավոր գաղթականներ, կոմունիզմի և պրոլետարական ռևոլյուցիայի լուսավոր գաղափարները կտանեք Ձեզ հետ»[1]։

Այսպիսով, միայն Սովետական սոցիալիստական պետությունն էր, որ ինչպես մեր հայրենիքի մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի նկատմամբ հանդես էր բերում բացառիկ հոգատարություն, ամեն ջանք գործ դնում նրա փրկության և ազատագրության համար։

* * *

Հայկական Գործերի Կոմիսարիատը խոշոր ծառայություն կատարեց Սովետական Ռուսաստանում բնակվող հայ աշխատավորությանը Սովետական իշխանության շուրջը համախմբելու և նրա մասնակցությունը Սովետական Հայրենիքի պաշտպանությունը ապահովելու գործում։

Քաղաքացիական պատերազմի տարիներին «ամեն ինչ ռազմաճակատի համար» լոզունգը դարձավ պարտիայի և կառավարության ամբողջ քաղաքականության առանցքը։ Այդ լոզունգին էր ենթարկված նաև Սովետական պետության ազգային քաղաքականությունը։ Հարկավոր էր Ռուսաստանի բոլոր ժողովուրդների աշխատավոր մասսաների ուժերն ու միջոցները մոբիլիզացնել հանուն Սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության։

Ընկեր Ստալինի ամենօրյա հսկողության տակ Ազգային կարմիր գնդեր և զորամասեր կազմակերպեցին բոլոր ազգային կոմիսարիատները և բաժինները՝ Լատվիական, Լիտվական, Էստոնական, Լեհական, Հայկական, Մուսուլմանական, Ուկրաինական և մյուսները։

Այդ ազգային զորամասերը փայլուն էջեր գրեցին Սովետական իշխանության թշնամիների դեմ մղված քաղաքացիական պատերազմի պատմության մեջ, սովետական Կարմիր Բանակի և սովետական ողջ ժողովրդի հետ պաշտպանելով Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նվաճումները։

Հայկական Գործերի Կոմիսարիատը ևս այդ ուղղությամբ խոշոր ագիտացիոն, պրոպագանդիստական և կազմակերպական աշխատանք կատարեց հայ աշխատավորության մեջ։

Այդ մասին Հայկական Կոմիսարիատի հաշվետվության մեջ Վ. Տերյանը գրում է.

«...Նկատի ունենալով այն տենդային աշխատանքը, որ տեղի է ունենում Կարմիր Բանակը կազմակերպելու ուղղությամբ՝ համաշխարհային պրոլետարական ռևոլյուցիայի նվաճումներին սպառնացող միջազգային իմպերիալիզմի դեմ պայքարելու համար, գլխավոր ուշադրությունը կենտրոնացվեց ագիտացիայի վրա, որը մղվում էր ինչպես զինվորականների մեջ, այնպես էլ ճակատամերձ գոտում գտնվող քաղաքացիական բնակչության մեջ... Ներկայումս նախապատրաստական աշխատանք է կատարվում գերությունից վերադարձող

[1] „Жизнь национальностей", № 34 (42) от сентября 1919 г.

հայ ռազմագերիներին ընգունելու ուղղությամբ և նրանց մեջ ագիտացիա է մղվում այն հարցերի շուրջը, որոնք կապված են Սոցիալիստական Հայրենիքը պաշտպանելու համար զինվորական ջոկատներ կազմակերպելու համար»[1]։

Կատարված այդ աշխատանքի շնորհիվ հայ ժողովրդի լավագույն զավակները ոչ միայն մասսայաբար մտան Կարմիր Բանակի զորամասերի մեջ, այլև 1918 թվականի վերջին Պյատիգորսկում հայկական ռազմական ջոկատների միավորմամբ ստեղծվեց հատուկ Հայկական գունդ, որը զինվորների ընդհանուր ցանկությամբ կոչվեց Լենինի անվան գունդ։ Լենինի անվան գունդը, որը գնալով աճում և համալրվում էր հայ ժողովրդի հերոս զավակներով, քաղաքացիական պատերազմների տարիներին անցավ փառապանծ մարտական ուղի։

Գնահատելով ազգային կոմիսարիատների գործունեությունը քաղաքացիական պատերազմի տարիներին, Ազգժողկոմատը Ժողկոմսովետին գրած զեկուցման մեջ գրում է.

«Ահա այսպես էին աշխատում Ազգժողկոմատին կից Հայկակոն, Լեհական, Լատիշական և մյուս բոլոր կոմիսարիատները։ Նրանք բոլորն էլ կարող են նշել մի շարք ծառայություններ ռևոլյուցիայի նվաճումների պաշտպանության գործում ռեակցիայի գրոհից»[2]։

Այսպիսով, քաղաքացիական պատերազմի տարիներին Հայկական Գործերի Կոմիսարիատը պատվով կատարեց Ժողկոմսովետի և Ազգժողկոմատի դիրեկտիվները, Լենինի ու Ստալինի մարտական առաջադրանքները։

* * *

Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից հետո, Սովետական իշխանության ներքին թշնամիներին ջախջախելու գործում խոշոր ծառայություն մատուցեց Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը։

1918 թվականի ընթացքում Ազգժողկոմատը ընկեր Ստալինի գլխավորությամբ կազմակերպեց և իրագործեց տարբեր ազգերի բուրժուա-նացիոնալիստական կոնտրռևոլյուցիոն կազմակերպությունների լիկվիդացումը Սովետական Ռուսաստանում։

Նացիոնալիստական կազմակերպությունները Սովետական Ռուսաստանում լինելով «Ազգային կառավարությունների» և «Ազգային խորհուրդների» ֆիլիալները, կապող օղակներ էին հանդիսանում ծայրամասերի և ռուսական կոնտրռևոլյուցիոն ուժերի միջև։

Նրանք իրենց կոնտրռևոլյուցիոն գործունեությամբ ամենուրեք հակադրվում էին Սովետական իշխանության նորաստեղծ օրգաններին։ Ազգային կոմիսարիատների և նրանց տեղական օրգանների կազմակերպման պրոցեսը իրագործվում էր ազգային բուրժուազիայի դեմ մղվող կատաղի պայքարի և բախումների ճանապարհով։

Այդ նույն ժամանակաշրջանում լիկվիդացվեցին նաև Սովետական Ռուսաստանի տերիտորիայում գործող հայկական բուրժուա-նացիոնալիստական բազմաթիվ կազմակերպություններ, որոնք ստեղծվել էին համաշխարհային

[1] ЦГАОР, ф. 1318, д. 40, л. 91.

[2] „Шесть лет национальной политики Советской власти и Наркомнац 1917—1923“. Москва, издание отдела печати и информации НКН, стр. 7.

առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին և փետրվարյան ռևոլյուցիայից անմիջապես հետո։

Սովետական Ռուսաստանում գործող հայկական բուրժուա-նացիոնալիստական կազմակերպությունների կոնտրռևոլյուցիոն գործունեությունը ղեկավարվում էր ինչպես Թիֆլիսի «Հայոց ազգային խորհրդի», այնպես էլ Մոսկվայի «Հայաստանի պաշտպանության կոմիտե»-ի կողմից։ Այդ կազմակերպությունները կոնտրռևոլյուցիոն կապերի մեջ էին մտել նաև օտարերկրյա պետությունների հետ։

Ուկրաինայում գործող «Հայկական ռազմական կոմիսարիատը», որը 1917 թվականին զբաղվում էր Հարավ-արևմտյան ռազմաճակատից վերադարձող հայ սպաների և զինվորների էվակուացիայի հարցերով, Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո Թիֆլիսի «Հայոց ազգային խորհրդի» ցուցումներով վերակազմվում է և դառնում է հայոց «ազգային խորհրդի» ներկայացուցչություն Ուկրաինական կոնտրռևոլյուցիոն ռազմական կից։ Այդ կոմիսարիատը 1918 թվականի հուլիսի 1-ին Մոսկվայի «Հայաստանի պաշտպանության կոմիտեին գրած հաշվետվության մեջ, իր կոնտրռևոլյուցիոն կապերի մասին գրում էր.

«...Սերտ հարաբերություններ և կապեր են հաստատվել Սիբիրի, Դոնի, Կուբանի կառավարությունների և Հյուսիսային Կովկասի լեռնականների, Ցյուրոյի և Մուսավաթի հետ... ամենամոտ ապագայում կարիք կլինի հարաբերություններ հաստատել կենտրոնական տերությունների դիվանագիտական ներկայացուցիչների հետ, հայոց ազգային խորհրդի դիրեկտիվների և ցուցումների սահմաններում...»[1]։

Սովետական իշխանությունը չէր կարող հանդուրժել ցարական գեներալների հետ կապված Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոներների հակասովետական դիրեկտիվներով գործող կազմակերպությունների գոյությունը։

Ազգությունների Գործերի ժողովրդական Կոմիսար ընկեր Ստալինի ցուցումներով Հայկական Գործերի Կոմիսարիատը զբաղվեց առաջին հերթին Պետրոգրադում գործող հակասովետական, այսպես կոչված, «Հայկական ռազմական կոմիսարիատի» լիկվիդացման հարցով։

1918 թ. մարտի 7-ին „Известия ВЦИК"-ի № 42-ում հրապարակվում է ժողկոմսովետի և Ազգժողկոմատի՝ Վ. Ի. Լենինի, Ի. Վ. Ստալինի և Վ. Ա. Ավանեսովի ստորագրությամբ դեկրետը, որով լիկվիդացված է համարվում կոնտրռևոլյուցիոն այդ բույնը։

Նշված կոմիսարիատի բոլոր գործերը, փաստաթղթերը, ունեցվածքը, կապիտալները, ինչպես նաև հիշյալ կոմիսարիատի շենքը հանձնվում են Ազգությունների Գործերի ժողովրդական Կոմիսարիատին կից Հայկական Գործերի Կոմիսարիատին։

Այն բանից հետո, երբ 1918 թ. մայիսին «Հայոց ազգային խորհուրդը» գերմանա-թյուրքական գիշատիչների ձեռքից «անկախություն» ստանալով, վարում էր Հայաստանը իմպերիալիստներին վաճառելու քաղաքականություն և հակասովետական դաշինքի մեջ էր սպիտակ գեներալների հետ, երբ Բաքվում դաշնակները քվեարկեցին անգլիացիներին հրավիրելու օգտին և գործում էին Սովետական իշխանության դեմ, երբ Աստրախանում և Հյուսիսային Կովկասում դաշնակների կողմից ստոր պրովոկացիաներ էր սարքվում Սովետական

[1] ЦГАОР, ф. 1235, опись 93, д. 163, л. 130.

իշխանության դեմ, երբ նրանք Ցարիցինում մասնակցել էին սպիտակ գեներալների ստոր դավադրությանը, կրկին ու կրկին ցույց տվին, որ հայ բուրժուազիան և դաշնակցությունը հանդիսանում են սովետական կարգերի այնպիսի երդվյալ թշնամիներ, ինչպիսիք էին Կալեդինն ու Դուտովը, Կոլչակն ու Դենիկինը։ Ժողկոմսովետը 1918 թ. հուլիսի 19-ին Վ. Ի. Լենինի ստորագրությամբ ընդունեց նոր որոշում։ Որոշման մեջ նշելով հայկական տարբեր անունների տակ գտնվող նացիոնալիստական կազմակերպությունների բուրժուական բնույթը, կոնտրռևոլյուցիոն գործունեությունը և «նկատի ունենալով, որ այդ բուրժուական կազմակերպությունները, որոնց կազմի մեջ մտնում են ակնհայտ կոնտրռևոլյուցիոն տարրեր, որոնք թաքնվելով Հայաստանի պաշտպանության կեղծ խոսքերով, դրամական հանգանակություններ են կատարում և ջոկատներ կազմակերպում հայոց կոնտրռևոլյուցիոն ազգային խորհրդի տրամադրության տակ ուղարկելու համար և ագիտացիա են մղում Սովետական իշխանության դեմ, առաջարկվում է.

1. Հայկական բոլոր վերը հիշված ազգային խորհուրդները, կոմիտեները, պաշտպանության խորհուրդները, ռազմառևոլյուցիոն կոմիտեները և այլն վերացնել...»[1]։

Ժողկոմսովետի որոշմամբ առաջարկվեց լիկվիդացված կազմակերպությունների ամբողջ գույքը և կապիտալները հանձնել Հայկական Գործերի Կոմիսարիատին։

Հայկական Գործերի Կոմիսարիատը Ժողկոմսովետի որոշումը տեղերում իրագործելու համար կազմակերպում է կենտրոնական լիկվիդացիոն հանձնաժողով Վ. Տերյանի նախագահությամբ։

Կոմիսարիատը հատուկ դիրեկտիվ է իջեցնում իր տեղական բաժանմունքներին ու լիազորություններին և տեղերն է ուղարկում իր ներկայացուցիչներին Ժողկոմսովետի որոշումը իրագործելու համար։

Ժողկոմսովետի որոշման դեմ բողոքում է Մոսկվայի՝ Հայաստանի պաշտպանության կոմիտեն։ Ժողկոմսովետը 1918 թ. օգոստոսի 3-ին քննության առնելով այդ հարցը որոշում է.

«...Բողոքը թողնել անհետևանք։

Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումը ազգային կոմիտեն որպես կոնտրռևոլյուցիոն բնույթի բուրժուական կազմակերպություն փակելու մասին, գտնել ճիշտ»[2]։

Ուկրաինան, Դոնը և Կուբանը սպիտակգվարդիականներից մաքրելուն զուգընթաց, Ժողկոմսովետի որոշման համաձայն ջախջախվում և լիկվիդացվում էին հայկական բուրժուա-նացիոնալիստական կազմակերպությունները ևս։

Այսպիսով, 1918—1919 թթ. ընթացքում ընկեր Ստալինի անմիջական նախաձեռնությամբ և ղեկավարությամբ լիկվիդացվեցին հայկական բուրժուանացիոնալիստական բոլոր կոնտրռևոլյուցիոն կազմակերպությունները։ Պետական խոշորագույն այդ միջոցառումը հող պատրաստեց Հայկական Գործերի Կոմիսարիատի բեղմնավոր գործունեության համար և Սովետական Ռուսաստանում բնակվող հայ աշխատավորությանն ավելի համախմբեց Սովետական իշխանության և բոլշևիկների պարտիայի շուրջը։

---

[1] „Известия" ВЦИК, № 151, от 19 июля 1918 г.
[2] ЦГАОР, ф. 1318, д. 40, л. 74.

* * *

Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն «կառավարությունները» տապալելու և Սովետական իշխանություն հաստատելու համար մղված ամբողջ պայքարը անմիջականորեն գլխավորում էին Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը։

Ընկեր Ստալինը Անդրկովկասին նվիրված իր բազմաթիվ հոդվածներում ամբողջությամբ մերկացնում էր Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոներներին, որպես օտարերկրյա իմպերիալիստների գործակալներ, Անդրկովկասի ժողովուրդների դավաճաններ։

Ընկեր Ստալինի հոդվածները և ցուցումները նոր լիցք էին տալիս Անդրկովկասի բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն պայքարին։

Ընկեր Ստալինի հայ ժողովրդին ուղղված հռչակավոր դիմումը «Թյուրքահայաստանի մասին», ուղեցույց հանդիսացավ Հայաստանի աշխատավորությանը՝ Սովետական իշխանության համար մղված պայքարում։

Ընկեր Ստալինը այդ դիմումի մեջ մերկացնում էր հայ ժողովրդի դարավոր թշնամիներին՝ արևմտյան իմպերիալիստներին, որոնց «Դիվանագիտական իղձերի և Արևելքի արյունոտ վարչական մարզանքների առարկա» դարձած, խարված Հայաստանը ընկել էր ստրկական կացության մեջ և շաղախվել իր զավակների արյունով։

Ընկեր Ստալինը նշելով հայ ժողովրդի ազատագրության միակ ճիշտ ուղին, ցույց տվեց, որ «Դիվանագիտական կոմբինացիաների հին ուղին Հայաստանի ազատագրության ուղին չէ...»[1]։

Ընկեր Ստալինը կոչ արեց հայ աշխատավորությանը համախմբվել Մեծ Հոկտեմբերի ազատաբեր դրոշի տակ, որովհետև հայ ժողովրդի ազատագրումը, նրա «Բախտը սերտորեն կապված է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի բախտի հետ»[2]։

Հայ բոլշևիկների պայքարը դաշնակների արյունոտ տիրապետության դեմ ամբողջովին ընթացավ ընկեր Ստալինի այդ ցուցումների հիման վրա։ Հայաստանում դաշնակների կոնտրռևոլյուցիոն իշխանությունը տապալելու և սովետական կարգեր հաստատելու գործում վճռական դեր խաղաց նաև Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը և նրա բաժին Հայկական Գործերի Կոմիսարիատը, որի ամբողջ գործունեությունը ընթանում էր ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ։

Հայկական Գործերի Կոմիսարիատի գոյության փաստը Սովետական կառավարության կազմում, հսկայական ռևոլյուցիոնացնող նշանակություն ունեցավ հայ աշխատավորության համար։ Հայկական Գործերի Կոմիսարիատի ամբողջ գործունեությունը, ինչպես տեսանք, ուղղված էր այդ մեծ նպատակին։

Չնայած Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոներների հարուցած արգելքներին, Հայկական Գործերի Կոմիսարիատին հաջողվում էր մշտական կապ ունենալ Հայաստանի աշխատավորության հետ։ Կոմիսարիատի ներկայացուցիչները հաճախակի հանդիպումներ էին ունենում և շփվում հայ աշխատավորական լայն մասսաների հետ։ Նրանք տեղական բոլշևիկյան կազմակերպությունների

---

[1] Ի. Վ. Ստալին, հ. 4, էջ 30։

[2] Նույն տեղում, էջ 31։

հետ միասին խոշոր ագիտացիոն, պրոպագանդիստական և կազմակերպական աշխատանք էին կատարում հայ աշխատավորության մեջ, նրանց ոտքի հանում հանուն Սովետական իշխանության։

«Կոմիսարիատին հաջողվեց,— ասված է Հայկական Գործերի Կոմիսարիատի հաշվետվության մեջ,— իր գործունեության առաջին իսկ օրերին Կովկաս ուղարկել մի շարք ագիտատոր և պրոպագանդիստ ընկերների՝ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի իմաստն ու նպատակները հայ մասսաներին պարզաբանելու, Սովետական իշխանության գաղափարները պրոպագանդելու և Անդրկովկասի հետ կապ հաստատելու համար»[1]։

Հայկական Գործերի Կոմիսարիատը իր մամուլի օրգաններում, որոնք առատորեն տարածվում էին հայ աշխատավորության մեջ, սիստեմատիկաբար պրոպագանդում էր Սովետական իշխանության վեհ գաղափարները և մերկացնում հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակցության պարտիային։

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները իրենց տրամադրության տակ ունեին Հայկական Գործերի Կոմիսարիատի կողմից հայերեն լեզվով թարգմանված Լենինի «Ապրիլյան թեզիսները», Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ը, «ՌՍՖՍՌ-ի Կոնստիտուցիան և Սովետական իշխանության կարևորագույն դեկրետները՝ հաշտության, հողի մասին, Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան «Թյուրքահայաստանի մասին» դեկրետը և Սովետական իշխանության պատմական այլ փաստաթղթեր, որոնք կարևորագույն զենք էին հանդիսանում հայ ժողովրդի թշնամիներին մերկացնելու և ասելու ճշմարտությունը Սովետական իշխանության մասին։ Ռուսաստանում դեռևս գործող Հայկական բուրժուա-նացիոնալիստական կոնտրռևոլյուցիոն կազմակերպությունների լիկվիդացումը, որը տեղի ունեցավ ընկեր Ստալինի նախաձեռնությամբ, մեծ չափով թուլացրեց դաշնակների տիրապետությունը Հայաստանում և հեշտացրեց նրա դեմ աշխատավորների մղած պայքարը։

Հայկական Գործերի Կոմիսարիատի միջոցով Սովետական իշխանության կազմակերպած նյութական և բարոյական բացառիկ օգնությունը հայ դաղթականությանը, նրանց շրջանում կազմակերպված կուլտուր-լուսավորական, ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքը մեծ ազդեցություն էին գործում Հայաստանի աշխատավորության վրա։

Դա մեծ օգնություն էր կոմունիստական պարտիայի Հայաստանի կազմակերպություններին, որի շնորհիվ Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաները ավելի էին համախմբվում կոմունիստների շուրջը, նրանց պայքարը ավելի էր ուժեղանում դաշնակների արյունոտ տիրապետության դեմ, հանուն Սովետական իշխանության։ Դրա ցայտուն արտահայտությունն էր Հայաստանի աշխատավորության 1920 թվականի Մայիսյան հերոսական ապստամբությունը։

„Жизнь национальностей" թերթը 1920 թվականի նոյեմբերի 7-ի տոնահամարում հանրագումարի բերելով և ըստ արժանվույն գնահատելով Հայաստանի ազատագրության համար ստալինյան Ազգժողկոմատի և նրա բաժին Հայկական Գործերի Կոմիսարիատի երեք տարվա մղած պայքարը «Սովետական իշխանությունը և հայերը» վերնագրով խմբագրական հոդվածում գրում էր.

[1] ЦГАОР, ф. 1318, д. 40, л. 78.

«...Կոմիսարիատի աշխատանքը դրսևորվեց ոչ միայն Ռուսաստանի հարավում և Հյուսիսային Կովկասում։ Նա այս տարվա գարնանը արտահայտվեց նաև Անդրկովկասում։ Բավական է հիշել Հայաստանում հայ կոմունիստների ապստամբության մասին (խոսքը 1920 թ. Հայաստանի Մայիսյան ապստամբության մասին է—Ս. Ա.). Ճիշտ է, այդ հերոսական ապստամբությունը կոնտրռևոլյուցիոներների բնում անխնա կերպով ճնշվեց դաշնակ-մաուզերիստաների կողմից, բայց փաստը ինքնին այնքան նշանակալից է, որ հարկ չկա նրա մասին երկար խոսելու, այդ փաստը թերևս Հայաստանի սովետիզացիայի մոտենալու առաջին նշանն է...»[1]։

Ահա, այսպես բարձր է գնահատել Ազգժողկոմատի պաշտոնական օրգանը՝ Հայաստանում սովետական կարգեր հաստատելու գործում, Հայկական Գործերի Կոմիսարիատի կատարած դերը։

Այսպիսով, ինչպես տեսանք, բոլշևիկների փառապանծ պարտիայի՝ հայ ժողովրդի ազատագրման համար մղած պայքարում, պայքար, որը անմիջականորեն ղեկավարում էին հայ ժողովրդի մեծ ազատարարներ Լենինը և ընկեր Ստալինը՝ ստալինյան Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը և նրա բաժին հանդիսացող Հայկական Գործերի Կոմիսարիատը խոշոր և վճռական դեր կատարեցին։

* * *

Հայաստանում Սովետական իշխանություն հաստատելուց հետո, Հայկական Գործերի Կոմիսարիատը, որպես իր խնդիրները կատարած ռևոլյուցիոն օրգան, 1921 թվականի սկզբին ավարտեց իր գործունեությունը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի բոցերում ծնված Հայկական Գործերի Կոմիսարիատը պատվով կատարեց իր պատմական ռևոլյուցիոն խնդիրները Սովետական Միության Կոմունիստական պարտիայի առջև, պրոլետարիատի մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի առջև։

---

[1] Жизнь национальностей, № 85 (92) от 7 ноября 1920 г.